առասպելաբանական ավանդությունները, ժողովրդական սպառնալիքները, որոշ հեքիաթներ, առակներ, զվարճախոսություններ, ինչպես նաև տարբերակները:

Նախատեսված է շարունակել շրջանի դաշտային գյուղերի բանահյուսական ավանդույթների հետազոտումը, իսկ որոշ խնդիրների պարզաբանման համար նպատակահարմար է կատարել ստացիոնար գրառումներ:

Արմենուհի Ստեփանյան

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԱՐԱԽՃԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԸ
/ ըստ ՀՊՊԲ ազգագրական Ֆոնդերի նյութերի/

1. Հայ ժողովրդական տարազի բաղկացուցիչ տարրն են կազմել արախչիները, որոնց զարդանախշերի քննությունը բացահայտում է դրանց աղերսը հավատալիքային պատկերացումների հետ: Այս առումով ուշագրավ են տղամարդկանց արախչիները, որոնք զարդանախշերի հարստությամբ ու բազմազանությամբ մի ուրույն խումբ են կազմում:

2. Արախչիները, ըստ զարդաձևերի, մի կողմից դրսևորում են որևէ պատմա-ազգագրական շրջանի բնորոշ տեղական ուրույն գծեր, մյուս կողմից երևան են բերում ընդհանրապես հայ ժողովրդի մտահայեցողությանը, նրա մշակութային ավանդույթներին բնորոշ ընդհանրություն:

3. Արախչիների զարդանախշերի գույներում գերակշռում են կարմիր, կանաչ ու կապույտի մուգ և բաց երանգները, որոնք ամենայն հավանականությամբ առնչվում են գույների վերաբերյալ ունեցած ժողովրդական պատկերացումների հետ:

4. Արախչիներն ասեղնագործված են երկրաչափական զարդանախշերով, ի տարբերություն տարազի մյուս բաղկացուցիչ մասերի, որոնք հարուստ են նաև բուսանախշով ու կենդանական նախշով:

5. Արախչիների զգաթային մասի նախշաձևերի մեջ կայուն կերպով պահպանվում են որոշակի պատկերներ, որոնք առնչվում են տակավին նախադարից եկող պատկերացումների հետ և զուգահեռներ ունեն հնագիտական նյութերում: Այդ նախշաձևերն իրենց արտաքին տեսքով հարատևելով մինչև մեր դարի առաջին քառորդը, ամենայն հավանականությամբ, արդեն չեն ընկալվել այն բովանդակային ու գաղափարական իմաստով, ինչ ունեցել են հնում: